

Հայ Պատրիարքին իտալերէն դասերուն համար: Նոյն Պատրիարքին հիւանդութիւնը հոգացողներուն վճարուած: Նոյն տարին վախճանած Հայ Պատրիարքին հոգւոյն համար մատուցուած պատարագներուն տրուած պատարագուցներ: Նոյն տարի Յուլիսին կը յիշուին՝ դեղին, բժշկին, թաղման վճարուած ծախքեր: Դեկտ. 8ին կը յիշուին վախճանեալ Պատրիարքին ուտեստի եւայլն ծախքեր: Հանգուցեալ Պատրիարքը թողած է նաեւ տարին 3 հատ մշտնջենաւոր պատարագներ, որոնց համար ամէն տարի վճարմունքներ կատարուած են:

Վատիկանեան մատենադարանի Հայ ձեռագիրներու մէջ կը գտնուի վերն յիշուած վարդանայ գիրքն (Nr. 32) որ մեծ հաւաքածոյ մըն է 169 կտոր նիւթերու:

Դարձեալ կայ (Nr. 31) ուրիշ հաւաքածոյ մը կրօնական նիւթերու (278 թուղթ ամբողջ գրուած) որ թէպէտ յիշատակարան չունի, սակայն ամբողջն Յովհ. Խուլ Պատրիարքին ինքնագիրն է:

Բայց ամենէն աւելի նշանաւոր է նոյն Մատենադարան պահուած այն հրաշալի գրուած եւ Յովհ. Խուլ Պատրիարքէ անձամբ գունագեղ նկարուած Աստուածաշունչն (Nr. 1), որուն վրայ, բաց ի վերն բնագրիս մէջ գրած էս՝ յիշատակութիւն ըրաւ նաեւ Հ. Ամս. 1914, էջ 11, որոնց կը յաւելում: